4870

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«02» 06 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 071 - 26

Նախաձեռնող՝ *«ԹԱՂԱՄԱՍ» ՍՊԸ*
Երևան, Մաշտոցի 20/34

Գործունեությունը՝ *Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում*
Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջան բնակավայր, Շահումյան 17/14

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 071 - 26

« 02 » հունվարի 2026թ.

Դիլիջան բնակավայրի Շահումյան 17/14 հասցեում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Թաղամաս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան բնակավայր

Ներածական մաս. «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ համալիրի 5-րդ գոտին նախատեսվում է կառուցել Տավուշի մարզի Դիլիջան համայքի Դիլիջան բնակավայրի Շահումյան 17/14 հասցեում:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել 11-003-0217-0130, կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N27032026-11-0083 վկայականը:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ, համաձայն ՇՄԱԳ-ում ներկայացված տեղեկատվության առկա են ծառեր և թփեր, որոնք ամբողջությամբ պահպանվելու են, ծառահատում չի նախատեսվում: Տարածքի բացարձակ բարձրությունը տատանվում է 1196.5մ -1234.5 մ սահմաններում, ստորգետնյա ջրերը տարածքի կենտրոնական և հյուսիսային մասերում տեղադրված են 15-20 մետր խորությունների վրա:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

հողակտորի մակերես՝ 2470.4 մ^2,

կառուցապատման մակերես՝ 988,16 մ^2, (40.0%),

շենքի ընդհանուր մակերես՝ 6288.7 մ^2 ,

կանաչապատման մակերես՝ 1400 մ^2 (56.6% ներառյալ բնական լանդշաֆթը),

Շենքերի ընդհանուր բնակելի մակերես՝ 3282.01մ^2,
Շենքերի ընդհանուր ավտոկայանատեղիների մակերես 1009.53 մ^2,
Շենքերի ընդհանուր օգտագործման մակերես 478 մ^2:

Շենքի -2-րդ, -1-ին, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարկերում նախատեսվում են ընդհանուր 38 բնակարան: Հատակագծով շինության երկարությունը վերգետնյա մասում 43,5 մ է, ստորգետնյա մասում՝ 58,7 մ, առավելագույն խորությունը կազմում է 18,9 մ:

Կառուցվածքը կարկասային է՝ միաձույլ երկաթբետոնե սյուներով, հեծաններով և ծածկերով: Նախատեսված է երեք կիսաստորգետնյա հարկ՝ բնակելի մասով և կայանատեղիներով, ինչպես նաև 1 ստորգետնյա հարկ՝ նախատեսված 32 կայանատեղիների համար, սպասարկման անհրաժեշտ սենյակներով: Դրսում նույնպես նախատեսված է կայանատեղի՝ 10 մեքենայի համար: Վերգետնյա մասում շենքը բոլոր կողմերից ունի տարբեր խորությունների պատշգամբներ: Շենքի տանիքը պետք իրականացվելու է հարթ՝ ջրահեռացման ներքին 3 կետով միջանցքներով:

Շենքն ապահովված կլինի հրշեջ մեքենայի սանդուղքի 3 կողմից մոտեցման հնարավորությամբ: Հակահրդեհային, վթարային ելքը նախատեսված է չծխացող աստիճանավանդակներով: Բոլոր հարկերում առկա են հրշեջ ծորակներ, ավտոմատ հրդեհային ազդանշանային համակարգ:

Շենքի ջրամիացումն և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան:

Շենքի ջրամատակարարումն իրականացվելու է քաղաքային ջրագծից: Կենցաղային ջրամատակարարումն ապահովելու համար թաղամասում նախատեսված է պոմպակայան:

Բնակելի շենքի տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ընդհանուր կաթսայատնից: Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանալու են՝ բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղու քաղաքային կոլեկտոր, համաձայն տեխնիկական պայմանի:

Տարածքի մակերևութային ջրերի մի մասի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Մնացած անձրևաջրերի մասը հավաքվելու է նախատեսված ջրամբարում, կանաչապատ տարածքները ջրելու համար:

Շինարարության փուլում ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից, իսկ աշխատողների խմելու ջրի պահանջարկն ապահովվելու է ջուրը շինարարական հրապարակ մեքենաներով բերելու եղանակով:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչը աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է: Բիոզուգարանների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով:

Համալիրի տարածքում է տեղադրվելու է կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված աղբամաններ:

Էներգաարդյունավետություն ապահովելու համար օգտագործվելու են համապատասխան մեկուսացման շերտեր և նյութեր, բարձր որակի պատուհաններ և արևային վահանակներ:

Հիմքերի փորման ժամանակ առաջացած՝ 4000 մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված վայր, իսկ մնացած՝ 6000 մ^3 ծավալով հողը, շինարարական աշխատանքների ընթացքում կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական թափոնները՝ 125 մ³ ծավալով տեղափոխվելու են համայնքապետարանի կողմից համաձայնեցված վայր: Տարածքում ծառահատում չի նախատեսվում:

Շինհրապարակը նախատեսվում է ցանկապատել: Բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում, բետոնաշաղախային հանգույցից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Համալիրի կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 56.6%-ը (մոտավորապես 1400 մ²), մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը: Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման նախագծի, Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Հետազոտման տարածքը բնութագրվում է բնորոշ սողանքային ռելիեֆով, տեղամասի ընդհանուր լանջը համընկնում է «Կաղնի Խաչ» հնագույն սողանքային մարմնի հետ, որի ակտիվությունը կասեցվել է սողանքային մարմնի լեզվակային մասում՝ դրենաժային թունելի կառուցումից հետո: Հետազոտվող տարածքի լանջը սնող ջրեր չեն հայտնաբերվել հորոտանցքերում մինչև 7 մետր խորության սահմաններում:

Բուն գործունեության տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, պատմամշակութային և բնության հուշարձաններ չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական հրապարակներում և մոտեցնող ճանապարհներին փոշու առաջացումը կանխարգելելու նպատակով օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացնել ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի, ինչպիսիք են ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, հողային զանգվածները) և թափոնների տեղափոխումն իրականցնել փակ ծածկով մեքենաներով,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
-իրականացնել շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անիվների լվացում,
-բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- պարբերաբար իրականացնել օդի աղտոտվածության գործիքային չափումներ,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը հավաքել հատուկ տարողության մեջ և վերաօգտագործել շինարարական տարածքների ջրցանման համար,
-հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ՝ հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
-շահագործման փուլում իրականացնել ճանապարհային նշանների, նշագծումների և անվտանգության տարրերի պարբերաբար ստուգումներ,

- շինարարական տրանսպորտային միջոցները և մեքենաների տեղափոխումն իրականացնել սահմանված երթուղիներով և աշխատանքային ժամերին (9:00-18:00),

Ընդամենը բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել՝ 11 240 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տավուշի մարզի Դիլիջան բնակավայրի Շահումյան 17/14 հասցեում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, ինչպես նաև Տավուշի մարզպետարանն ու Դիլիջանի համայնքապետարանը:

Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Ներքին գործերի նախարարության կողմից ներկայացվել է մասնագիտական կարծիք, առ այն, որ գործունեության իրականացման տարածքը գտնվում է սողանքային գոտում և նախարարության կողմից պահանջվել է նախատեսել համապատասխան միջոցառումներ: Փորձաքննական գործընթացում ներկայացվել են ինժեներաերկրաբանական համալիր և երկրաֆիզիկական հետազոտություններ: Սողանքային երևույթները կանխելու նպատակով առաջարկվել են տեխնիկական և քաղաքաշինական լուծումներ, ինչի վերաբերյալ ներքին գործերի նախարարության կողմից լրամշակված հաշվետվության վերաբերյալ ստացվել է դրական կարծիք:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ իրականացնել մշտադիտարկումներ, ապահովելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակները:
6. Բացառել գործունեության իրականացման տարածքում ծառերի և թփերի հատումը:
7. Իրականացնել շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անիվների լվացում:
8. Ապահովել փոշեճնշիչ սարքավորումների կիրառումը, առաջնորդվել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջներով:
9. Հնարավոր սողանքային երևույթները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված հակասողանքային և ինժեներական համապատասխան պաշտպանական միջոցառումները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Թաղամաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Դիլիջան համայնքի Դիլիջան բնակավայրի Շահումյան 17/14 հասցեում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան